# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

## ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

18.01.2019թ.
Ժամը 11:30

**Հանձնաժողովի նախագահ՝** Սարգիս Վարդանյան

**Անդամներ՝** Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

(Ս. Վարդանյան)

1. ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու մասին:
2. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1. ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու մասին.**

**(Ս. Վարդանյան)**

**1.1** Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը, որի մասին համակարգի միջոցով տեղեկացվել էր Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

1.2 Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ն հրավերով սահմանված ժամկետում և կարգով չի շտկել անհամապատասխանությունները, մասնավորապես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի /հավելված 3/ տեխնիկական բնութագիրը լրացրել է թերի:

1.3 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 48-րդ կետի 2-րդ ենթակետով որոշեց Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ի հայտի 1-ին,15-րդ,19-

րդ,32-րդ,41-րդ,61-րդ և 64-րդ չափաբաժինները մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

1.4 Քանի որ 1-ին,15-րդ,19-րդ,32-րդ,41-րդ,61-րդ և 64-րդ չափաբաժիններից միայն 1-ին չափաբաժինն է, որ ունի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից, ուստի հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով որոշեց 15-րդ,19-րդ,32-րդ,41-րդ,61-րդ և 64-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, իսկ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել Ա/Ձ Գրիգոր Բաբայանին:

1.5 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին համակարգի միջոցով ուղարկել ծանուցում առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտով առաջադրված ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.6 Հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ա/Ձ Գրիգոր Բաբայանի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Ս. Վարդանյան)

2.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ս. Վարդանյան)

3.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 29.01.2018թ.-ին ժամը 14:30, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Վարդանյան

Անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան